

ՀԱՄԵՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԱՍՏԻՃԱՆԸ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

ԳԵՈՐԳ ԳԻՂՈՒՄԵԱՆ

Շուրջ մէկ տարի առաջ լոյս տեսաւ անուանի հայագէտ, համշենագէտ Սերգէյ Վարդանեանի «Բանահիւսական պատումի միջավայրը (կրօնափոխ համշենահայերի մի գուարճապատումի տարբերակները)» ուշագրաւ մենագրութիւնը (Երեւան, ՀԱԻ հրատ., 352 էջ): Այս գիրքը, ի տարբերութիւն ամէն օր լոյս տեսնող բազմաթիւ գրքերի, անհաղորդ ոճով, չոր-ցամաք գրուած շարադրանք չէ, այլ գիրք է մարդկանց մասին:

«Սոյն մենագրութեան մէջ... փորձել ենք կոտրել գիտական գրականութեան մէջ տասնամեակներ իշխող այն կարծրատիպը, երբ **հեղինակին** յղելիս կամ որեւէ մէկին անդրադառնալիս, յաճախ առանց որեւէ կենսագրական տուեալ յիշատակելու, նշում է սոսկ նրա ազգանունն ու անունն միայն սկզբնատառը՝ մոռանալով, որ ինչ էլ որ գրում ենք, ի վերջոյ, այդ ամէնը **մարդկանց** մասին է»,- գրում է հեղինակը գրքի առաջաբանում՝ միանգամից պարզաբանելով գրքի գիտական շարադրանքի սկզբունքը, ասել է՝ ընթերցողին մեկնելով աշխատութեան, այսպէս ասած, բանալին:

Սերգէյ Վարդանեանն աւելի քան յիսուն տարի առաջ է սկսել համշենագիտութեամբ զբաղուել, եւ ինչպէս երէկ, այնպէս էլ այսօր դժուար է խօսել համշենագիտութեան մասին՝ առանց հոլովելու նրա անունը: Աւելի դիպուկ՝ ոչ թէ դժուար է, այլ՝ անհնար, քանի որ նա այն հայագէտն է, որն իր ապրած տարիներին մեծ մասը նուիրել է այդ գործին, որը նրա համար, կարելի է ասել, ուսմունք ու համոզմունք է դարձել, որին նա հաւատարիմ է արդէն, ինչպէս ասացինք, աւելի քան կէս դար: Սերգէյ Վարդանեանը շատ քիչ բան ժառանգելով համշենագիտութեան գործընկերի՝ երկար ու ձիգ տարիներին ընթացքում, յաճախ կեանքը վտանգելով, անհամեմատելիօրէն հարստացրեց եղածն ու, այո՛, համշենագիտութեան դպրոց հիմնեց, եւ դա ամենեւին չափազանցութիւն չէ:

Անուանի հայագէտը ծնուել է 1952 թ. Երեւանում, 1969 թ.՝ ւաւրտել Հ. Պարոնեանի անուան թիւ 59 դպրոցը, 1974 թ.՝ Խաչատուր Աբովեանի անուան հայկական պետական մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, աշխատանքի անցել հոգեբանութեան ամբիոնում: Առանձին ուշադրութեան են արժանի **«Պիոներ կանչ»** («Կանչ») թերթում եւ **«Պիոներ»** («Արթիւր») ամսագրում նրա աշխատած երկուական տարիները: Այդ կարճ ընթացքում Ս. Վարդանեանը կարողացել է շօշափելի ներդրում ունենալ նոր սերնդին հայրենասիրութեան ոգով դաստիարակելու ասպարէզում: Նրա կոչով Հայաստանի, նաեւ Հիւսիսային եւ Հարավային Կովկասի հայկական դպրոցների աշակերտների տարբեր բարբառներով հաւաքած բանահիւսութիւնը հրատարակուեց «Հրեղէն ձին» (1981) եւ «Թագաւորի երգերը» (2003) ժողովածուներում, դառնալով անգուցորդելի աշխատանք մեր բանագիտութեան նորագոյն պատմութեան մէջ: Դրանցից ընտրուած արձակ նմուշները «Փրկուած հեքիաթներ» վերնագրով նրա ջանքերով Երեւանում լոյս են տեսել անգլերէն («The salvaged tales», 2007) եւ երկու անգամ՝ գերմաներէն («Gerettete Marchen», 2009, «Vor dem Vergessen errettete armenische Mairchen», 2023):

Նրա հանրայայտ «Հայոց մայրաքաղաքները» (1985) գիրքը սկզբնապէս որպէս յօդուածաշար 1983 թ. տպագրուել է «Պիոներ» ամսագրում, դառնալով հայ աշակերտների համար հայրենագիտութեան անփոխարինելի աղբիւր: «Հայոց մայրաքաղաքները» գիրքը նոր նիւթերով հարստացուած «Հայաստանի մայրաքաղաքները» վերնագրով վերահրատարակուել է 1995 թուականին՝ հեղինակին արժանացնելով «Թէքէեան» Մշակութային Միութեան «Հայկաշեն Ուզունեան» մրցանակին եւ 2012 թ.՝ Երեւանի քաղաքապետի Ռսկէ մեդալին:

Հետագայ տարիներին Ս. Վարդանեանն աշխատել է Հայ ճարտարապետութեան քանգարան-ինստիտուտում, Հայաստանի Հանրապետութեան Գիտությունների ազգային ակադեմիայի հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտում, 1991-2002 թուականներին եղել է ՀՀ կառավարութեան անդամներ կրօնի գործերի պետական խորհրդի փոխնախագահը: Նա թէւ արմատներով վանեցի է, հիմնադրման օրումսինց՝ 1992 թ.-ից, Հայաստանի «Համշեն» հայրենակցական-բարեգործական ՀԿ նախագահի տեղակալն է, 2004-2018 թթ. հասարակական հիմունքներով աշխատել է նոյն ՀԿ «Ձայն համշենական» պաշտօնաթերթի գլխավոր խմբագիր: Ի դէպ, այս թերթի մասին. 2004 թ. յուլիսից մինչեւ 2018 թ. փետրուարը՝ 13-14 տարի, Ս. Վարդանեանը միայնակ հրատարակել է թերթը, որի ողջ հազար օրինակ տպարանակր անվճար բաժանել է Հայաստանի եւ սփիւռքի ընթերցողներին, ուղարկել Ռուսաստանի, Աբխազիայի ու Թուրքիայի համշենցիներին: Նա 2009 թ. որպէս խմբագիր ստացել է Համաշխարհային հայկական կոնգրէսի, Ռուսաստանի հայերի միութեան, ՀՀ սփիւռքի նախարարութեան եւ Հայաստանի ժողովախոսների միութեան բարձրագոյն մրցանակը:

1969 թ. անունը Սերգէյ Վարդանեանը Մեւ ծովի առափնեայ Ատլէր քաղաքում ակնամատեն է լինում մօտակա Մոլդովկայ գիւղում հայկական դպրոց բացելու ստորագրահաւաքի եւ խորապէս դառնանում է Կրասնոդարի երկրամասի հայկական դպրոցների ծանր վիճակից: Վերադառնալով Հայաստան՝ նա չի կարողանում մոռանալ այդ պատկերը: Եւ, ահա, նրա անմնացորդ նուիրմանը հայրերինը վկայ եղաւ յատկապէս 1970-ականն թուականներից, երբ նա սկսեց զբաղուել անձայրածիր տարածք եւ 11 ժամային գօտի ունեցող ԽՍՀՄ-ում սփռուած հայերի խնդիրներով: Հէնց այդ ընթացքում էլ նա բացառապէս համշենահայերին, որը պէտք է դառնար նրա գիտական ու անձնական կեանքի դժուար ուղին, ճակատագրի կողմից իրեն տրուած հարցի, չգիտեմ, դրակա՞ն, թէ՞ բացասական պատասխանը, բայց այդ մասին գիտնականի կենսագրութիւնն աւելի պերճախօս է: Նա գրկանքներ կրելով բազմիցս եղել է թէ՛ խորհրդային տարբեր հանրապետութիւններում, թէ՛ Արեւմտեան Հայաստանում (ժամանակակից Թուրքիայում)՝ յաճախ առերեսելով կեանքին սպառնացող ստոյգ վտանգների: Դեռեւս 1984 եւ 1987 թթ. Ղազախստանում, Ուզբեկստանում, Գրղզստանում եւ Ռուսաստանում յայտնաբերել է իսլամադաւան համշենահայեր: 2019 թ. տողերիս հեղինակը ծաւալուն հարցազրոյց է անցկացրել նրա հետ (տե՛ս՝ «50 տարի անց... կրկին համշենահայերի մասին», «Ազգ», շաբաթաթերթ, 2019, յուլիսի 19, 28, էջ 5-6), որով նուիրելով հայագէտն ամփոփել է իր կեանքի կէտարեայ ուղին, նշել դէպի մեծ նուիրում տանող ճանապարհին յայտնուելու հանգամանքները:

Սերգէյ Վարդանեանի գիտական կեանքում բեկումնային եղաւ 1981 թուականը, երբ նա մեկնում է Ռուսաստան՝ Կրասնոդարի երկրամասի համշենցիների գիւղերն ուսումնասիրելու, որտեղ իրեն յայտնում են, թէ Ղազախստանից ու Գրղզստանից եկած ինչ-որ մարդիկ կան, որոնք, խօսում են համշենցի-

ների պէս: Նա միանգամից գլխի է ընկնում, որ Կենտրոնական Ասիայի բնակիչների նման հագնուած այդ մարդիկ պէտք է, որ 1944 թ. Աջարիայից բռնի տեղահանուած համշենահայերը լինեն, որոնց ինքը մի քանի տարի փնտռում էր՝ ցանկանալով փաստագրել եւ՝ բռնի տեղահանութիւնը, եւ, ի հարկէ, առաջին հերթին, բանահիւսական նիւթեր հաւաքել: Բայց, ժամանակի սղութեան պատճառով, նա չի հասցնում խորամուխ լինել մանրամասների մէջ եւ վերադառնում է Երեւան: Սօս երեք տարի անց՝ 1984 թ. ապրիլին, տեղեկանալով, որ Կրասնոդարի երկրամասում վերաբնակուած համշենահայերից ոմանք եկել են Գրղզստանի Օշի մարզի Քրզըլ-Քիյա քաղաքից, մեկնում է նախ Գրղզստան, ապա՝ Ղազախստան: Այդ ուղեորութեան ընթացքում Վարդանեանին յաջողում է գրառել զգալի քանակի բանարտեսի նմուշներ եւ փաստագրել բռնագաղթը: Ղազախստանում, Գրղզստանում եւ Ուզբեկստանում Վարդանեանը լինում է նաեւ 1987 թ.: Այդ պրպտումների ընթացքում Ղազախստանում գրառուած **«Արդէլեցիք՝ աջիք»** երգիծական մանրավէպին ու դրա փոփոխակներին է նուիրուած **«Բանահիւսական պատումի միջավայրը (կրօնափոխ համշենահայերի մի գուարճապատումի տարբերակները)»** մենագրութիւնը, որն, ի շարք բազմաթիւ իւրայատկութիւնների, առանձնանում է նաեւ մահմեդական եւ քրիստոնէայ հայերի բանահիւսութիւնը առաջին անգամ համապարփակ քննութեան ենթարկելու առումով: Այս գիրքը բոլորովին նոր մօտեցմամբ է ներկայացնում ընթերցողին, այն եզակի է ոչ միայն համշենագիտութեան, այլեւ բովանդակ հայագիտութեան ասպարէզում, քանի որ մի քանի հարիւր էջերում արտացոլուած են Համշենի վերջին 300 տարուայ պատմութիւնն ու համշենագիտութեան հետ այս կամ այն աղերս ունեցող շատերի կենսագրութիւնները, սկադեմիական մակարդակում, ի հարկէ: Հայագէտն իր պատմական անդրադարձն սկսում է շատ հեռուից՝ 17-րդ դարի սկզբից՝ յիշատակելով նոյնիսկ Միմէնոն դայիր Լեհացու «Ուղեգրութիւն, տարբերութիւն եւ յիշատակարանը» ուխտագնացութեան ութերը: Այնուհետեւ նա յիշատակում է այս պահին գիտութեանը յայտնի՝ կրօնափոխ համշենահայերին վերաբերող ամենահին սկզբնաղբիւրը, որը պատկանում է Հայր Պօղոս վարդապետ Մեհերեանի գրչին («Պատմութիւն վարդու Տէառն Հ. Պօղոս վարդապետի Մեհերեան, շարագրեալ յիւրմէ 1811 Վենետիկ, ի վանս սրբոյն Ղազարու»): Այս ձեռագրի կրօնափոխ համշենցիների հատուածի բնագիրը առաջին անգամ դեռեւս 1998 թ. գիտական շրջանառութեան մէջ է դրուել հէնց ի շնորհիւ Ս. Վարդանեանի:

Այնուհետեւ հերթով յիշատակելով իրենց գրքերում համշենցիներին անդրադարձած հեղինակներին՝ Ղուկաս Ինճիճեանին, Միմաս Բժշկեանին, Աբէլ Մխիթարեանին, Սարգիս Հայկունուն, ընթերցող շրջանակներին անյայտ պատմական դրուագներից հիւսում է Համշենի, մասնաւորապէս կրօնափոխ համշենցիների պատմութիւնը: Աւելին՝ Ս. Վարդանեանն անդրադարձ է կատարել նոյնիսկ 1872 թ. Համշեն այցելած Մեծ Բրիտանիայի պետական արխիւի տնօրէն Ֆրենսիս Փալգրեյտի որդուն՝ Ուիլիըմ Ջիֆֆորդ Փալգրեյտին, որը յայտնի արեւելագէտ էր:

Հեղինակն անդրադարձել է նաեւ Պաթումի մարզի համշենահայերի պատմութեանն ու մշակոյթին՝ նշելով, որ նրանց մասին 1883 թ. առաջին յօդուածագիրներից է եղել Յարութիւն Գաթեանը: «Բաթումի մարզի համշենցիները» գլխում Ս. Վարդանեանը միջանկեալ խորամուխ է լինում նաեւ յիշեալ Յարութիւն Գաթեանին կենսագրական որոշ տուեալների մէջ: Էական վերլուծութեան են ենթարկուած նաեւ «Համշեն» եւ «համշենցի» անուններն ու տարբեր ազգերի կողմից դրանց աղճատումը՝ քաղաքական կամ տուեալ լեզուի նշանակի համակարգի պատճառով:

Բացառիկ արժէք ունի գրքի «Կրօնափոխ համշենահայերի բարբառի եւ բանահիւսութեան ուսումնասիրութեան պատմութիւնից (XIX –XXI դդ.)» գլուխը, որտեղ հեղինակը մանրամասն անդրադառնում է համշենագիտութեան ձեռքբերումներին եւ այդ համատեքստում կրօնափոխ համշենահայերի մասին գրուած գրքերին ու յօդուածներին: Նա երախտագիտութեամբ եւ յարգալից բժայնդրութեամբ է մօտենում Համշենի պատմութեամբ զբաղուած ամէն մի գիտնականի ու հատ-հատ նշում է նրանց ուսումնասիրութիւնները, հրատարակման թուականը, վայրը, պայմանները՝ չմոռանալով, ի հարկէ, տալ արժանի գնահատականը՝ նշելով առաւելութիւններն ու թերութիւնները:

Այնուհետեւ հեղինակն սկսում է հակիրճ շարադրել «Արդէլեցիք՝ աջիք» գուարճապատման 37 պատմումները, որոնք XIX–XXI դդ. գրի են առնուել Ղազախստանում, ԱՄՆ-ում, Արեւմտեան Հայաստանում (նախկին Օսմանեան կայսրութեան եւ ժամանակակից Թուրքիայ), Արցախում, Գարադաղում, Նախիջեանում, Չավախում, Կեսարիայում, Լոռիում, Տաուշում, Սեւանայ լճի առաջանում, Միւնիքում, Փէրիայում, Մուշում, Հալէպում եւ այլուր: Յատկանշական է, որ կրօնափոխ համշենցիների 7 փոփոխակներից 6-ը գրառել է Ս. Վարդանեանը, մէկը՝ Ղազախստանում, հինգը՝ Արդիւնի նահանգում, իսկ մէկը՝ Հարվարդի համալսարանի երեք աշխատակիցները՝ Պոստոնում, այնտեղ Խոփայի գաւառից բնակութեան տեղափոխուած համշենցի երիտասարդից:

Հեղինակը մանրամասն անդրադառնում է նաեւ այն պատմումներին, որոնց տուեալները նշուած չեն: Հմտօրէն համադրելով եւ ուսումնասիրելով առկայ մեծ ծաւալի նիւթը, Ս. Վարդանեանն այդ ամէնը համեմատութեան մէջ է դնում նաեւ յիշեալ պատմումի՝ այլ ժողովուրդների (ռուսների, թուրքերի, պարսիկների, սաղոնների) տարբերակների հետ՝ առաւել մեծ արժէք ու գիտականութիւն հաղորդելով իր այս ծանրակշիռ մենագրութեանը: Նա առանձին գլխով անդրադառնում է ամերիկացի հայագէտ Նեյմս Ռասքլի դիտարկումներին՝ մասնանշելով որոշ հայկական գուարճապատմումների նրա չպատճառաբանուած եւ թոյլ հիմքեր ունեցող կամ ընդհանրապէս չունեցող մեկնաբանութիւններին:

Այս կարեւորն աշխատութիւնը պատրաստելիս Ս. Վարդանեանն օգտագործել է շուրջ հազար ծանօթագրութիւն եւ յղում, հայերէն 11 արխիւային ֆոնդ, 271 գիրք, 198 պարբերական, ռուսերէն 85 գիրք եւ պարբերական, ֆրանսերէն, անգլերէն գերմաներէն, ատրպէյճաներէն, թուրքերէն տասնեակ գրքեր եւ պարբերականներ: Այս աշխատութիւնը նորութիւն է ընդհանուր առումով՝ հայագիտութեան, մասնաւոր առումով՝ համշենագիտութեան մէջ: Սա համշենագիտութեան նոր աստիճանն է:

Երեւան
gyulumyan1910@mail.ru